2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կանոնադրությանն (այսուհետ՝ կանոնադրություն) համապատասխան:
3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, հրապարակայնությունը, անդամների իրավահավասարությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը:
4. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:
5. Կազմակերպությունը օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով կարող է ստանալ պետության օգնությունն և աջակցությունը:
6. Կազմակերպությունը իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրերի, այլ միջոցառումների:
7. Կազմակերպությունը համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ: Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր միջազգային ու օտարերկրյա ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների հետ:
8. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
9 Կազմակերպությունը կարող է գործել նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ այլ երկրների տարածքներում ստեղծված ստորաբաժանումների միջոցով՝ այդ երկրների օրենսդրությամբ սահմանված կարգով՝ եթե դա չի հակասում «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:
10. Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ և պարտականություններ:
11. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով :
12. Կազմակերպությունը իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրները իրականացնելու համար իրավունք ունի հիմնադրել լրատվական միջոցներ:
13. Կազմակերպությունը պետական գրանցման պահից, ունի իր անվամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, անկյունադրոշմ, ձևաթղթեր, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

14. Կազմակերպության անվանումն է.

հայերեն՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

անգլերեն՝ "Mission Armenia" charitable non-governmental organization.

ռուսերեն՝ "Миссия Армения" общественная благотворительная организация.

15. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան Գ. Նժդեհի 42:

## II Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները

1 Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1. Նպաստել Յայաստանի Յանրապետության հոգևոր, մշակութային, սոցիալական և տնտեսական զարգացմանը:
2. Նպաստել տարեցների, հաշմանդամների, փախստականների և այլ խոցելի խմբերի կյանքի որակի բարելավմանը, առողջ և արժանապատիվ ապրելակերպին՝ ներդնելով և զարգացնելով համայնքահեն սոցիալ-առողջապահական ծառայությունները:
3. Նպաստել տարեցների, հաշմանդամների, փախստականների սոցիալական իրավունքների ապահովմանը՝ նրանց կենսամակարդակի և սոցիալական բարեկեցության բարելավման նպատակով:
4. Սոցիալական, առողջապահական, իրավաբանական և հոգեբանական օգնություն ցուցաբերելու միջոցով խթանել անապահով շահառուների կարողությունների զարգացմանն ու ինքնօգնության ձևավորմանը՝ նրանց օգնելով ինքնուրույնաբար բավարարելու իրենց կարիքները և ավելի ճկունորեն արձագանքելու տեղի ունեցող սոցիալական երևույթներին:
5. Բարելավել բնակչության կարիքավոր համայնքների և սոցիալապես խոցելի խմբերի կյանքի պայմանները բարձրացնելով սոցիալական ծառայությունների որակը և մատչելիությունը:
6. Նպաստել աղքատության հաղթահարման և սոցիալական ապահովության համակարգի բարելավմանն ուղղված գործունեությանը:
7. Աջակցել սոցիալական սեկտորում բարեփոխումների իրականացման առաջընթացին՝ ստեղծելով և ներդնելով հասցեական սոցիալական ծառայությունների արդյունավետ մոդելներ:
8. Աջակցել գործազուրկ և սոցիալապես անապահով աշխատունակ քաղաքացիների աշխատանքային շուկայի արդի պահանջարկին համեմատ մասնագիտական կրթություն ստանալուն և / կամ վերաորակավորմանը (վերամասնագիտացմանը)՝ նրանց դարձնելով մրցունակ աշխատանքի տեղավորման հարցում և նպաստելով նրանց անապահով վիճակից ինքնուրույն կերպով դուրս գալուն և ինքնաբավ դառնալուն:
9. Նպաստել և օժանդակել հասարակական, բարեգործական, սփյուռքահայության հետ հոգևոր, մտավոր, մշակութային տնտեսական համագործակցությանը, ինչպես նաև այլ կազմակերպությունների միջև համագործակցության ծավալմանը, խրախուսել բոլոր այն անհատների, խմբերի, միությունների և կազմակերպությունների համագործակցությունը, որոնք ցանկանում են աջակցել այս նպատակների իրագործմանը.
10. Նպաստել միայնակ ծերերի, հաշմանդամների և բռնագաղթվածների վերաբերյալ տվյալների բանկի ստեղծմանը:

## III Կազմակերպության իրավունքները պարտականությունները և պատասխանատվությունը

1. Կազմակերպությունն իրավունք ունի՝
   1) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.
   2) օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.
   3) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.
   4) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.
   5) կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ. ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին.
2. Կազմակերպությունը պարտավոր է՝
   1) ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 7 օրացուցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը.
   2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում. վարել իր անդամների հաշվառումը.
   3) իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության համագումարի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը.
   4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.
   5) Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին՝ ներկա գտնվելու կազմակերպության համագումարին.
   6) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.
   7) առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները.
   8) անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն.

## IV Կազմակերպությանն անդամակցելու, անդամությունից դուրս գալու կարգը և կազմակերպության անդամների իրավունքների պաշտպանությունը

1. Կազմակերպությանն անդամակցելու, անդամությունից դուրս գալու կարգը.

1) Կազմակերպության հիմնադիրներից յուրաքանչյուրը կազմակերպության ստեղծումից հետո կազմակերպության անդամ է այնպիսի իրավունքներով ու պարտականություններով, ինչպիսիք ունեն կազմակերպության մյուս անդամները:
2) Անձը, որը կազմակերպության հիմնադիր չէ, կազմակերպության անդամ կարող է դառնալ իր կամքի ազատ արտահայտման և գրավոր դիմումի հիման վրա:
3) Մինչև տասնչորս տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:
4) Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:
5) Անձի անդամակցությունը կազմակերպությանը նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք չէ:
6) Կազմակերպության անդամը կարող է անարգել դուրս գալ անդամակցությունից իր գրավոր դիմումի համաձայն, իսկ հեռացումը՝ կազմակերպության վարչության որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրական դրույթների խախտումների համար

Կազմակերպության անդամների իրավունքների պաշտպանությունը.

1) Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի՝
2) ներկա գտնվել կազմակերպության համագումարին.
3) Մինչև տասնչորս տարեկան անչափահասը, իսկ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպության համագումարին կարող է մասնակցել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի միջոցով.
4) ծանոթանալ կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
5) կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել կազմակերպության վերադաս մարմիններ՝ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով.
6) Կազմակերպության մարմնի այդ թվում՝ համագումարի որոշումը, որն ընդունվել է օրենքի, կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարել է կազմակերպության կամ կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.
7) Ընտրել և ընտրվել կազմակերպության ղեկավար ու վերստուգիչ մարմիններում.
8) կազմակերպության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել կազմակերպության կառուցվածքի և գործունեության վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ.
9) Կազմակերպության անդամը ստանում է անդամատոմս, ձեռք է բերում հաշվառման քերթիկ, մուծում է անդամավճար, որի չափերը գանձման, կարգը սահմանում է կազմակերպության վարչությունը:

## V Կազմակերպության կառուցվածքը , կառավարումը և բարձրագույն մարմինը

1. Կազմակերպության բարձրագույն մարմինը համագումարն է`, որն ունի կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք.
1) Կազմակերպության հերթական համագումարը հրավիրվում է վարչության կողմից երկու տարին մեկ անգամից ոչ պակաս, դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով` հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ` կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից:
2) Կազմակերպության համագումարի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ հնարավոր այլ եղանակով` համագումարի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ, սակայն ոչ ուշ, քան 14 օր առաջ:
3) Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, հրավիրվում և տեղի է ունենում կազմակերպության արտահերթ համագումար, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական համագումարի հրավիրման համար նախատեսված եղանակով` կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան այդ համագումարի անցկացման օրվանից 3 օր առաջ:
4) Կազմակերպության համագումարն իրավազոր է, եթե հրավիրվել է կանոնադրությամբ սահմանված կարգով, և ներկա են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
5) Կազմակերպության համագումարի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են ոչ պակաս քան երեք տարի:
6) Կազմակերպության գործունեության կամ կազմակերպության ժողովի ընթացքում օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն առաջանալու դեպքում հարցերը լուծվում են համագումարի որոշմամբ:

2 Կազմակերպության համագումարի բացառիկ իրավասությունն է`
1) կազմակերպության կանոնադրության հաստատումը , նրանում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը կամ նոր կանոնադրության հաստատումը.
2) բացառապես կազմակերպության համագումարի ենթակա և հաշվետու մարմիններն են` կազմակերպության վարչությունը և կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը, այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
3) երկու տարի ժամկետով ընտրել կազմակերպության նախագահ, կազմակերպության փոխնախագահ, կազմակերպության քարտուղար.
4) երկու տարի ժամկետով ընտրել կազմակերպության վարչություն, որի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են կազմակերպության նախագահը, կազմակերպության փոխնախագահը և կազմակերպության քարտուղարը և վարչության անդամները վերջիններս ընտրվում են համագումարի մասնակիցներից.
5) Կազմակերպության վարչության անդամների թիվը սահմանում է համագումարը:
6) կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից.
7) կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից.
8) Կազմակերպության համագումարը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել կազմակերպության այլ մարմնի.
9) Համագումարը հաստատում է կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները:

10) կազմակերպության համագումարը որոշումներ է ընդունում կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով.
11) Համագումարը բացառիկ իրավասության հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին.
12) Կազմակերպության արտահերթ համագումար հրավիրվում է կազմակերպության վարչության, կազմակերպության նախագահի, կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի որոշումներով կամ կազմակերպության անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի գրավոր պահանջով:
13) Համագումարը իր ոչ բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունում է իր որոշումներն ընդունելու ընդհանուր կարգով:

3. Կազմակերպության վարչությունը.

1) ընտրվում է կազմակերպության համագումարի կողմից երկու տարի ժամկետով և համարվում է կազմակերպության ղեկավար մարմինը համագումարների միջև ընկած ժամանակահատվածում.
2) Վարչության կազմի մեջ են մտնում նախագահը, փոխնախագահը, քարտուղարը և անդամները:
3) քննարկում և որոշումներ է ընդունում կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են կազմակերպության համագումարի բացառիկ իրավասությունների մեջ.
4) նախապատրաստում և հրավիրում է կազմակերպության համագումարները.
5) որոշում է կայացնում կազմակերպության անդամ դառնալու կամ անդամությունից զրկելու վերաբերյալ.
6) հաստատում է կազմակերպության տարեկան բյուջեն, կազմակերպության հիմնական միջոցառումների տարեկան պլանները, ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը.
7) որոշում է ընդունում երեք միլիոն դրամը գերազանցող շարժական և անշարժ գույքի և միջոցների ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում` օտարելու և դուրս գրելու վերաբերյալ:
8) սահմանում է անդամավճարի չափը և գանձումը կազմակերպելու կարգը:
9) որոշում է կայացնում կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, հիմնարկներ, հանձնաժողովներ, ինչպես նաև ներքին կառուցվածքային ստորաբաժանումներ՝ բաժիններ, աշխատանքային խմբեր ստեղծելու կամ լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը.
10) որոշում է կայացնում տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանցում մասնակցելու վերաբերյալ.
11) հաստատում է կազմակերպության ձևաթղթերի նմուշները.
12) կազմակերպության վարչությունը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով: Կազմակերպության վարչությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե կազմակերպության վարչության նիստին մասնակցում են կազմակերպության վարչության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են կազմակերպության վարչության նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ.
13) կազմակերպության վարչությունը իր հերթական նիստերը հրավիրում է ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ:

4. Կազմակերպության նախագահը.

1) ընտրվում է կազմակերպության համագումարի կողմից երկու տարի ժամկետով և ղեկավարում է կազմակերպության համագումարի և կազմակերպության վարչության աշխատանքները, ինչպես նաև հանդիսանում է կազմակերպության ղեկավար մարմինը կազմակերպության վարչության նիստերի միջև ընկած ժամանակահատվածում: Վարում է կազմակերպության համագումարի և կազմակերպության վարչության նիստերը.
2) կազմակերպության համագումարին հաշվետվություն է ներկայացնում կազմակերպության վարչության և իր կատարած աշխատանքների մասին.

3) ներկայացնում է կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում, տեղական և միջազգային կազմակերպությունների ընդհանուր ժողովներում և պաշտոնական հանդիպումներում.
4) կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի ստորագրում և հաստատում է՝ ֆինանսական փաստաթղթեր, հրամաններ, կարգադրություններ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր.
5) որոշում է ընդունում մինչև երեք միլիոն ՀՀ դրամը չգերազանցող շարժական և անշարժ գույքի, միջոցների ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ:
6) բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ.
7) հաստատում է կազմակերպության հաստիքային աշխատողների ցուցակը.
8) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է կազմակերպության հաստիքային աշխատողներին.
9) նշանակում և ազատում է առանձնացված ստորաբաժանումների, ներքին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին.
10) կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր և համաձայնագրեր, ստորագրում կազմակերպության համագումարի, կազմակերպության վարչության կողմից ընդունած փաստաթղթերը.

5. Կազմակերպության փոխնախագահը.
1) կատարում է կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորությունները.
2) կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի ստորագրում և հաստատում է՝ ֆինանսական փաստաթղթեր, հրամաններ, կարգադրություններ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր.
3) կազմակերպության նախագահի հանձնարարությամբ, նրա բացակայության ժամանակ կատարում է կազմակերպության նախագահի պարտականությունները:

6. Կազմակերպության քարտուղարը.
1) կազմակերպում է կազմակերպության գործավարությունը.
2) նախապատրաստում և արձանագրում է կազմակերպության վարչության նիստերը.
3) տնօրինում է կազմակերպության արխիվը.
4) կորդինացնում է կազմակերպության անդամագրության աշխատանքները:

## VI Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը

1. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը:
Այն ընտրվում է կազմակերպության համագումարի կողմից երկու տարի ժամկետով և հաշվետու է համագումարին:

2. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) իրավասու է՝
1) ցանկացած ժամանակ անցկացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում.
2) ծանոթանալ կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և կազմակերպության քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել կազմակերպության մարմիններ.
3) կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկատվություն.
4) իրականացնել կազմակերպության կանոնադրությունից կամ համագումարի որոշումներից բխող այլ լիազորություններ:
5) իրականացնում է կազմակերպության ղեկավար և կառուցվածքային մարմինների ֆինանսատնտեսական գործունեության ընդհանուր վերահսկողությունը,
6) իրականացնում է կազմակերպության գործունեության կանոնադրական վերահսկողությունը.
7) ներկայացնում է հաշվետվություն կազմակերպության համագումարին.

8) կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը իր նիստերը հրավիրում է առնվազն տարին մեկ անգամ: Որոշումներն ընդունվում են վերստուգիչ հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.Կազմակերպության կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական լիազորված մարմինը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասությունների, ստուգումների և ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

4.Կազմակերպության կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել կազմակերպության ձեռնարկած միջոցառումներով, պետական լիազորված մարմինը կազմակերպություն է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետները:

## VII Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրները և օգտագործման կարգը

1. Կազմակերպության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, դրամաշնորհներից , հիմնարկների և կազմակերպությունների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրատվություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից, այդ թվում նաև օտարերկրյա աղբյուրներից:
2. Կազմակերպությանն սեփականության իրավունքով կարող են պատկանել շենքեր, շինություններ, նյութական, դրամական, փոխադրական միջոցներ և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպությանն պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:
3. Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը կազմակերպության սեփականությունն է: Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:
4. Կազմակերպության հիմնադիրները և անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:
5. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրներին և անդամներին:

## VIII Կազմակերպության գործունեության վերակազմակերպումը և լուծարումը, հարկադիր լուծարման հիմքերը

1. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է համագումարի որոշմամբ:
2. Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
3. Կազմակերպությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ:
4. Կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության:
5. Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների:
6. Կազմակերպությունից կարող է առանձնանալ կազմակերպություն (կազմակերպություններ):
7. Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:
8. Կազմակերպության (կազմակերպությունների) վերակազմակերպման հետևանքով կազմակերպության կանոնադրության փոփոխությունները և (կամ) լրացումները կամ

գործունեության դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:

9. Կազմակերպության լուծարումը՝

1) կազմակերպության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:
2) կազմակերպությունը կարող է կամավոր լուծարվել համագումարի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է կազմակերպությունը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է.
3) կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:
4) կազմակերպության լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:
5) կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:
6) կազմակերպության լուծարման մասին որոշումը, կազմակերպության այլ մարմինների ու լուծարման հանձնաժողովի՝ լուծարման գործընթացին վերաբերող որոշումները, դրանք կայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատարան բողոքարկելու իրավունք ունի կազմակերպության ցանկացած անդամ
7) Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:
8) Կազմակերպությունը կարող է լուծարվել իր համագումարի կամ դատարանի որոշմամբ:
9) Կազմակերպության լուծարման մասին որոշում կայացնելու դեպքում կազմակերպությունը պարտավոր է այդ մասին հնգօրյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը, որի համաձայնությամբ կազմավորվում է լուծարքային հանձնաժողովը և սահմանվում կազմակերպության լուծարման կարգը և ժամկետները:
10) Կազմակերպության լուծարման դեպքում լուծարքային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց և պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, դրա անհնարինության դեպքում այն փոխանցվում է պետական բյուջե, իսկ վեճի առկայության դեպքում հարցը լուծվում է դատարանի կողմից:

i. Կազմակերպության հարկադիր լուծարման հիմքերը

1.Պետական լիազորված մարմինը կարող է կազմակերպությունը լուծարելու պահանջով դիմել դատարան, եթե՝

1) կազմակերպությունը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.
2) կազմակերպության հիմնադիրը ( հիմնադիրները) կամ լիազորված անձը կազմակերպությունը հիմնադրելիս թույլ են տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:
3) Կազմակերպությունը լուծարվում է նաև սնանկության հետևանքով:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

РА, УПРАВЛЕНИЕ ГОСДАРСТВЕННОГО

STATE REGISTER DEPARTMENT